

«STARMUS VI» փառատոնի շրջանակում Նոբելյան մրցանակակիր Քըրթ Վյուրթիխը ՀՀ ԳԱԱ-ում հանդես եկավ դասախոսությամբ



«STARMUS VI» գիտության, արվեստի ու երաժշտության միջազգային փառատոնի շրջանակներում ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի սեպտեմբերի 7-ին հյուրընկալեց Նոբելյան մրցանակակիր, շվեյցարացի քիմիկոս, կենսաֆիզիկոս Քըրթ Վյուրթիխին: Հանդիպմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահության անդամները, ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտների տնօրենները, գիտնականներ, երիտասարդ հետազոտողներ:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սադյանը: «Մեր հյուրն է Նոբելյան մրցանակակիր, ամբողջ աշխարհում հայտնի գիտնական, ում հետազոտության ոլորտը մոտ է մեր ակադեմիայի համակարգում աշխատող գիտնականների հետաքրքրությունների շրջանակներին», - ասաց Աշոտ Սադյանը և ներկայացրեց արոժեստր Քըրթ Վյուրթիխին:

անցած գիտական ուղին:

Քըրթ Վյուրթիխը հանդես եկավ ելույթով: Նա ներկայացրեց գիտության մեջ հաջողության հասնելու իր փորձը: Դիմելով երիտասարդ գիտնականներին՝ Քըրթ Վյուրթիխն ասաց. «Եթե դուք ուզում եք նկատելի լինել, եթե ուզում եք ինչ-որ մի բան ղեկավարել գիտության ոլորտում, պետք է լսեք խորհուրդներ և շատ-շատ աշխատեք մեծ խնդիրների վրա: Շատ կարևոր է, որ ուսանողներն իրենց կրթությունը ստանան լավ համալսարաններում, երիտասարդ գիտնականները խրախուսվեն և առաջնորդեն գիտությունը, հանդիպեն այն գիտնականներին, ովքեր կարողանում են աշխատել մեծ խնդիրների վրա և իրենց ուսանողներին էլ են դա սովորեցնում:

Ես մարզիկ էի, գիտությունն ինձ համար երեկոյան զբաղմունք էր, և ես երբեք չէի մտածում, որ կստանամ Նոբելյան մրցանակ: Գիտության մեջ դու աշխատում ես և համկարծ հայտնաբերում ինչ-որ մի բան: Ճանաչումը կարող է տևել 20 տարի և ավելի: Հետո միայն կարող եմ որոշել, դա արժանի՞ է Նոբելյան մրցանակի, թե՞ ոչ: Երիտասարդ գիտնականները պետք է հասկանան, որ հաջողությունը միանգամից չի լինում, դա շատ դժվար աշխատանք է: Դու չես կարող վստահ լինել, որ Նոբելյան կոմիտեն քեզ կհավատա: Պետք են տարիներ, որպեսզի հաստատվեն քո ուսումնասիրությունները: Դուք պետք է շատ աշխատեք, թեպետ ձեր ընտանիքն այնքան էլ երջանիկ չի լինում դրանից: Նոբելյան մրցանակ ստանալիս ինձ հետ էր իմ կինը, և դա փոխհատուցումն էր այն դժվար կյանքի, որը մա տեսել է, ո-

րովհետև ես անընդհատ լինում էի աշխատավայրում», - ասաց նա: Քըրթ Վյուրթիխը կարևորեց հիմնարար գիտական հետազոտությունների մշակակությունը ցանկացած կիրառական արդյունքի ստացման համար: Նա նշեց, որ, օրինակ, COVID-19-ի դեմ պատվաստանյութի ստացման աշխատանքները հիմնված են մի քանի տասնամյակ տևած հիմնարար հետազոտությունների վրա: Նոբելյան մրցանակակիրը խոսեց նաև իր կողմից մշակված միջուկային մագնիսական ռեզոնանսի մեթոդի, պրոնոզների մասին: Այնուհետև ծավալվեց հարց ու պատասխան:

Քըրթ Վյուրթիխը ծնվել է 1938 թվականի հոկտեմբերի 4-ին Շվեյցարիայի Աարբերգ համայնքում: Հիմնական կրթությունը ստացել է Բեռնի համալսարանում՝ մասնագիտանալով քիմիայի, ֆիզիկայի և մաթեմատիկայի ոլորտներում: Նա իր գիտական հետազոտությունները կատարել է աշխարհի առաջատար գիտահետազոտական կենտրոններում: Քըրթ Վյուրթիխը հայտնի է գիտական շրջանակներում «խելագար կովի հիվանդություն» սարսափելի հիվանդության առաջացման համար պատասխանատու պրոնոզների ուսումնասիրություններով: Պրոնոզները մահացու են ոչ միայն անասունների, այլև մարդկանց համար: Նա մշակել է միջուկային մագնիսական ռեզոնանսի մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու կենսաբանական մակրոմոլեկուլների տարածական կառուցվածքը: Այս հետազոտության համար 2002 թվականին Քըրթ Վյուրթիխն արժանացել է Նոբելյան մրցանակի:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հայտարարությունը սույն թվականի սեպտեմբերի 12-ի, լույս 13-ի գիշերը Հայաստանի հանդեպ Ադրբեջանի իրականացրած հերթական ագրեսիայի կապակցությամբ



2022 թ. սեպտեմբերի 13-ից ադրբեջանական զինված ուժերը, կիրառելով տարբեր զինատեսակներ, այդ թվում՝ ծանր հրետանի, ակամանետներ ու անօդաչու թռչող սարքեր, զանգվածային կրակ են բացել ՀՀ Սյունիքի, Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերի տարածքներում տեղակայված հայկա-

կան զինված ուժերի և բազմաթիվ խաղաղ բնակավայրերի ուղղությամբ՝ պատճառելով մարդկային ու նյութական կորուստներ, առանձին հատվածներում փորձելով ներթափանցել Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածք:

Այդ հերթական ագրեսիվ քայլով մեկ անգամ ևս պարզ է դառնում, որ Ադրբեջանը ոչ միայն նպատակ չունի առաջնորդվելու 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթներով, այլև, օգտվելով ռուս-ուկրաինական առճակատման հետևանքով աշխարհում ստեղծված ներկա բարդ ռազմաքաղաքական իրավիճակից, ձգտում է բռնազավթել ՀՀ տարածքը՝ երբեմնի հայկական Նախիջևանի հետ ցամաքային միջանցք հաստատելու պատճառաբանությամբ:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան դիմում է համաշխարհային հանրությանը՝ պահանջելով ձեռնպահ մնալ անհասցե հայտարարու-

յուններից և խստորեն դատապարտել Ադրբեջանի հերթական ագրեսիան Հայաստանի նկատմամբ ու ձեռնարկել իրական միջոցներ իրավիճակը կայունացնելու ուղղությամբ:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան իր պատրաստակամությունն է հայտնում հնարավոր բոլոր միջոցներով աջակցելու հայրենի երկրի պաշտպանության գործին և, խիստ կարևորելով ներկա պահին ազգային համերաշխության ամհրաժեշտությունը, կոչ է անում հանրության բոլոր ուժերին թիկունք լինել Հայոց բանակին, միասնաբար հանդես գալ թշնամու դեմ, զինվել հայրենի հողի, Հայոց պետականության պաշտպանության վճռականությամբ և հաղթանակի հավատով:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Աննա Ասատրյանն ընտրվեց ԸՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի պաշտոնում

Սույն թվականի օգոստոսի 19-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրեց արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանին: Մինչ այդ նա տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարն էր:

Աննա Ասատրյանը ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներին ներկայացրեց Արվեստի ինստիտուտի զարգացման իր տեսլականը: Նա նշեց, որ ինստիտուտում ստեղծվելու են Կինոյի և հեռուստատեսության, Ղեկորատիվ և կիրառական արվեստի բաժիններ, Պարագիտության, Հայ երաժշտական ֆուլկլորագիտության, Հայ-բրիտանական գիտամշակութային համագործակցության, հայ ժողովրդի՝ այլ ժողովուրդների հետ ունեցած մշակութային առնչությունների ուսումնասիրության կենտրոններ:

Աննա Ասատրյանը կարևորեց երիտասարդ բանիմաց հետազոտողներով ինստիտուտի գիտական կադրերի համալրումը, ինստիտուտի միջազգային համագործակցության աշխարհագրության ընդլայնումը, արտասահմանում հրատարակվող և ազդեցության բարձր գործակից ունեցող արվեստագիտական պարբերականներում Արվեստի ինստիտուտի աշխատակիցների հետազոտությունների արդյունքների տպագրումը, արտասահմանում հայ արվեստի ուսումնասիրության հարցերով զբաղվող հայ և օտարազգի արվեստաբանների շտեմարանի ստեղծումը: Նա անհրաժեշտ համարեց իրականացնել Տիգրան Չուխաճյանի և Արամ Խաչատրյանի երկերի լիակատար ժողովածուների ակադեմիական հրատարակությունը, ինչպես նաև առաջարկեց Արվեստի ինստիտուտին կից ստեղծել Տիգրան Չուխաճյանի թանգարան:

Աննա Ասատրյանը ծնվել է 1968 թ. Երևանում: 1987 թ. զերազմացույցյաժն ավարտել է Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի տեսական բաժինը, 1992 թ.՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի վոկալ-տեսական ֆակուլտետի երաժշտագիտության բաժինը: 1991-2003 թթ. դասավանդել է Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում: 2000-2002 թթ. եղել է Հայկական բաց համալսարանի երաժշտագիտության ֆակուլտետի ղեկավար: 2002 թ. աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում՝ որպես երաժշտության բաժնի գիտաշխատող: 2003 թ.-ին նշանակվել է ինստիտուտի գիտական քարտուղար: 2005 թ.-ին նշանակվել է ինստիտուտի փոխտնօրեն: Ղեկավարել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի նորաստեղծ բաժինը, երաժշտության բաժինը:

2008 թ. Աննա Ասատրյանը ստացել է արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան, 2012 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: Աննա Ասատրյանի գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 15 ատենախոսություն: Նա հեղինակել է 11 մենագրություն և 224 գիտական հոդված՝ տպագրված Հայաստանում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Ուկրաինայում, Իտալիայում, Լիբանանում, Իսրայելում հրատարակվող գիտական հանդեսներում և ժողովածուներում:

Սեյրան Մինասյանը վերընտրվեց ԸՀ ԳԱԱ Արամ Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում

Սույն թվականի օգոստոսի 19-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը ՀՀ ԳԱԱ Արամ Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի (ՀՀ ԳԱԱ ԲՖԻ) տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրեց քիմիական գիտությունների թեկնածու Սեյրան Մինասյանին:

Սեյրան Մինասյանը ներկայացրեց իր պաշտոնավարման ժամանակ ՀՀ ԳԱԱ ԲՖԻ-ում իրականացված աշխատանքները և նախատեսվող զարգացման ծրագրերը: Ինստիտուտը 3 տարվա ընթացքում ստացել է շուրջ 30 դրամաշնորհի ու ծրագրային պատվեր: Ինստիտուտի բյուջեն աճել է 4-5 անգամ: Վերագինվել են ինստիտուտի գիտահետազոտական բազան և ենթակառուցվածքը: Ինստիտուտի գիտական անձնակազմը երիտասարդացել է:

Առաջիկա տարիներին ՀՀ ԳԱԱ ԲՖԻ-ում իրականացվելիք միջոցառումների մասին Սեյրան Մինասյանը նշեց, որ նախատեսվում է Բարձր էներգիական նյութերի և պրոցեսների ուսումնասիրության նոր լաբորատորիայի ստեղծում, Երևանի պետական համալսարանի, Ռուս-հայկական համալսարանի հետ բազային 2 լաբորատորիաների ստեղծում, ինչը հնարավորություն կտա իրականացնելու համատեղ գիտակրթական ծրագրեր: Նախատեսվում է նաև արտերկրից գիտնականների ներգրավմամբ 3-4 նոր լաբորատորիաների և խմբերի ստեղծում, գիտական հաշվողական երկու հանգույցի ստեղծում:

Սեյրան Մինասյանը ծնվել է 1963 թ. ՀՀ Գյումրի քաղաքում: 1985 թզ. ավարտել է Երևանի պետական համալսարանի Քիմիայի ֆակուլտետը՝ ստանալով քիմիկոսի որակավորում: 1988 թ. ավարտել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան՝ կինետիկա և կատալիզ մասնագիտությամբ: 1988-1991 թթ. աշխատել է ԳԱԱ ԲՖԻ-ի Հեղուկաֆազ ազատ ռադիկալային ռեակցիաների լաբորատորիայում՝ որպես ավագ լաբորանտ, այնուհետև որպես գիտաշխատող, ասպ ավագ գիտաշխատող: 1991-1992 թթ. եղել է Գյումրի քաղաքի Շիրակի շրջանի շրջանային խորհրդի նախագահի տեղակալը: 2004-2013 թթ. աշխատել է ՀՀ բնագիտականության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ որպես զարգացման սեկտորի պետ, գիտաարտադրական սեկտորի պետ, տնօրենի տեղակալ գիտաարտադրական հարցերով: 2018 թ.-ից ՀՀ ԳԱԱ ԲՖԻ քիմիական ամփոփության ֆիզիկա-քիմիական հիմնախարցերի գիտական խմբի ղեկավարն է: 2019 թ. նշանակվել է ՀՀ ԳԱԱ ԲՖԻ-ի տնօրեն:

Սեյրան Մինասյանը շուրջ 120 գիտական աշխատանքի հեղինակ է: Մասնակցել է 4 միջազգային գիտական դրամաշնորհային և մոտ 20 միջազգային փորձագիտական և խորհրդատվական ծրագրերի:



Արսեն Գասպարյանն ընտրվեց ԸՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում

ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն ընտրվեց կենսաբանական գիտությունների թեկնածու Արսեն Գասպարյանը: Ընտրությունը տեղի ունեցավ սույն թվականի հուլիսի 29-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում: Արսեն Գասպարյանը բուսաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար էր նշանակվել 2022 թ.-ի հունվարի վերջին:

Արսեն Գասպարյանը ներկայացրեց վեց ամսվա ընթացքում բուսաբանության ինստիտուտում կատարած աշխատանքները: Նա նշեց, որ վերանորոգվել է Հնէաբուսաբանության թանգարանի ֆասադային հատվածը, նորոգվել է Մոլեկուլային կենսաբանության լաբորատորիայի տարածքը: Մեկնարկել են Արմեն Թախտաջյանի կիսանդուլ պատրաստման և տեղադրման աշխատանքները: Մեկնարկել է թափոնների տեսակավորման գործընթացը. տեղադրվում են թափոնամաններ: Ստեղծվել է բուսաբանական արահետ՝ կահավորված անհրաժեշտ ցուցանակներով: Մեկնարկել է նոր փայտե կառուցվածքներով խաղահրապարակի ստեղծման ծրագիրը: «ԲՈՒՆ» հեռուստաընկերության հետ համատեղ ստեղծվում է բույսերի մասին պատմող հաղորդաշար: Հեթաբրիտում տեղադրվել է հակահրդեհային համակարգ: Ստեղծվել են արագ արձագանքման խումբ և տարիանման պլաններ: Իրականացվում են էկոլոգիական միջոցառումներ, էքսկուրսիաներ: Բուսաբանության ինստիտուտը ներգրավվել է «Սևան» ազգային պարկի կառավարման պլանի մշակման, Քաղաքային կանաչ ենթակառուցվածքների կառավարում կլիմայի փոփոխության ակնկալվող մարտահրավերների շրջանակում քաղաքապետարանների կարողությունների զարգացման ծրագրերում:

Արսեն Գասպարյանը նշեց, որ նախատեսվում է Երևանի բուսաբանական այգու սահմանների ճշգրտում, ինստիտուտի գիտաշխատողների տպագրությունների ավելացում Scopus/Web of Science շտեմարաններում, երիտասարդ գիտնականների համար ծրագրերի և միջոցառումների իրականացում, նոր լաբորատորիաների հիմնում և սարքավորումներով լաբորատորիաների վերազինում: Բնագիտական ծրագրերից և ծառայություններից նախատեսվում է Ex-situ պահպանություն, վտանգված տեսակների վերաբնակեցում, կենսաբազմազանության մոնիթորինգ, տնկարանային և ջերմոցային տնտեսության վերականգնում, կանաչապատում և բույսերի վաճառք, խորհրդատվական ծառայությունների մատուցում:

Արսեն Գասպարյանը ծնվել է 1983 թ.-ին Երևանում: 2001-2003 թթ.-ին անցել է պարտադիր զինվորական ծառայություն ՀՀ զինված ուժերում: Սովորել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետում, դոկտորանտուրան անցել է Բեռլինի Ազատ համալսարանում: Եղել է նույն համալսարանի բուսաբանական գիտությունների «Դալեն» գիտահետազոտական կենտրոնի անդամ:

Արսեն Գասպարյանը 2007-2012 թթ.-ին աշխատել է Երևանի պետական համալսարանի բուսաբանության ամբիոնում, 2009-2016 թթ.-ին եղել է «Կենսաբանների հայկական միություն» ՀԿ-ի նախագահ, 2016 թ.-ից ընդգրկված է եղել Բուրյան համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) բնագիտական գիտությունների «Դալեն» գիտահետազոտական կենտրոնի անդամ: Արսեն Գասպարյանը 2007-2012 թթ.-ին աշխատել է Երևանի պետական համալսարանի բուսաբանության ամբիոնում, 2009-2016 թթ.-ին եղել է «Կենսաբանների հայկական միություն» ՀԿ-ի նախագահ, 2016 թ.-ից ընդգրկված է եղել Բուրյան համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) բնագիտական գիտությունների «Դալեն» գիտահետազոտական կենտրոնի անդամ:

Արսեն Գասպարյանը կենսաբանական գիտությունների թեկնածու է, 12 գիտական հոդվածի, 2 մենագրության, 5 թեզիսի հեղինակ է: Բելգիայի Լիեժի համալսարանի գիտնականներ է մամուլել Սերյուգին, Նիկոլաս Մագենը և հոլանդացի գիտնական Պիտեր վան դեն Բուլն իրենց հայտնաբերած քարաքուսի Ramalina ցեղի նոր տեսակն անվանակոչել են ի պատիվ Արսեն Գասպարյանի՝ Ramalina arsenii:

ԸՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրենի պաշտոնում ընտրվեց Սարգիս Աղայանը

Ս.թ. հունիսի 30-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրենի պաշտոնում ընտրվեց կենսաբանական գիտությունների թեկնածու Սարգիս Աղայանը:

Սարգիս Աղայանը ծնվել է 1986 թ.-ին Գյումրի քաղաքում: 2003-2007 թթ.-ին սովորել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի բաժնում՝ ստանալով բակալավրի որակավորում, 2007-2009 թթ.-ին շարունակել է կրթությունը նույն բաժնում՝ ստանալով մագիստրոսի որակավորում: 2009-2012 թթ.-ին եղել է ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ասպիրանտ, 2012 թ.-ին ստացել է կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2007-2008 թթ.-ին աշխատել է ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում՝ որպես ավագ լաբորանտ, 2008-2009 թթ.-ին՝ Հայաստանի պետական ագրարային համալսարանում՝ որպես ավագ լաբորանտ, 2010-2012 թթ.-ին՝ Երևանի պետական համալսարանի կենդանաբանության ամբիոնում՝ որպես ավագ լաբորանտ, 2012-2017 թթ.-ին՝ ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի կենդանաբանության ինստիտուտում՝ որպես գիտաշխատող, 2012-2022 թթ.-ին՝ Երևանի պետական համալսարանի կենդանաբանության ամբիոնում՝ որպես գիտաշխատող, 2017-2022 թթ.-ին ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի կենդանաբանության ինստիտուտում եղել է մոլեկուլային մակաբուժաբանության հետազոտական խմբի ղեկավարը, 2022-ից ինստիտուտի մոլեկուլային մակաբուժաբանության լաբորատորիայի ղեկավարն է: Միաժամանակ 2022 թ.-ի հունվարից համատեղությամբ աշխատում է Երևանի պետական համալսարանի կենդանաբանության ամբիոնում՝ որպես առաջատար գիտաշխատող:

2004-2006 թթ.-ին եղել է Երևանի պետական համալսարանի «Ինտելեկտուալ ակունք»-ի հիմնադիրը և նախագահը, 2016-2017 թթ.-ին՝ «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիր» ղեկավար մարմնի անդամ, 2013-2017 թթ.-ին՝ «Էկոտուր» ՄՊԸ-ի համահիմնադիր և տնօրեն, 2009-2017 թթ.-ին՝ «Կենսաբանների հայկական միություն» ՀԿ-ի փոխնախագահ, 2017-ից նույն ՀԿ-ի նախագահն է, 2019 թ.-ից՝ «ԷՄԻ Թերյու» ՄՊԸ-ի համահիմնադիր, 2020-2022 թթ.-ին՝ «ԷՄԻՓԻ Թերյու» ՄՊԸ-ի համահիմնադիր և տնօրեն, 2022 թ.-ից՝ ընկերության ֆինանսական համակարգող: 2022 թ.-ից՝ «ԷՄԻ Թերյու» ՓԲԸ-ի հիմնադիրն է և տնօրենը:

Ներկայացնելով ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի զարգացման իր տեսլականը՝ Սարգիս Աղայանն ասաց, որ անհրաժեշտ է մշակել ռազմավարություն, որի հիմնասյուներն են մասնակցային կառավարումը, արդյունավետ աշխատանքը և առողջ մրցակցությունը, համագործակցությունն ու մարդկային ռեսուրսները:

«Մեր երկարաժամկետ 10-15 տարվա նպատակներն են. կենտրոնն իր ցուցանիշներով դառնա Հայաստանի արդյունավետ 5 գիտական կենտրոններից մեկը, բազային ֆինանսավորումը կազմի կենտրոնի ընդհանուր ֆինանսական շրջանառության 20 %-ը, ծավալվի առնվազն երկու ինքնաբավ գիտական ծեռարկատիրական գործունեություն, իրականացվի կրթական գործունեություն: Վստահեցնում են, որ այս ամենին հասնելու համար կաշխատեն իրականացնել բոլոր քայլերը պատվով և պատասխանատվությամբ», - ասաց Սարգիս Աղայանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



Լրացավ անվանի գիտնական, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի գիտական ղեկավար, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ժիրայր Վարդանյանի 70-ամյակը:

Ժիրայր Վարդանյանը ծնվել է 1952 թ. օգոստոսի 28-ին Վայոց Ձորում՝ Եղեգնաձոր ավանում՝ աշխատավոր ծնողների՝ Հմայակ և Ռոզա Վարդանյանների ընտանիքում: Հայրը՝ Հմայակ Վարդանյանը, Հայրենական պատերազմի սկզբից մինչև նրա հաղթական ավարտը մասնակցել է տարբեր ճակատամարտերի: 1945 թ. ապրիլի վերջին ծանր վիրավորվել է: Արժանացել է տարբեր պարգևների, այդ թվում՝ «Կարմիր աստղ» և փառքի շքանշանների, տասնյակ մեդալների:

Ժիրայր Վարդանյանը, բարձր առաջադիմությամբ ավարտելով միջնակարգ դպրոցը, 1970 թ. ընդունվում է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտ՝ ներկայիս Հայաստանի ազգային ագրարային համալսարանը: 3-րդ



վոր բուսաբան, ակադեմիկոս Արմեն Թախտաջյանի անվամբ:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում կնքվել են համագործակցության մոր պայմանագրեր՝ ԱՊՀ և եվրոպական երկրների մի շարք առաջատար գիտական հաստատությունների հետ:

Ժ. Վարդանյանի անմիջական ջանքերով ու նախաձեռնությամբ ՀՊԱՀ-ում 2003 թ. ստեղծվեց անտառագիտության ամբիոն, որը համակարգում է «Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում» մասնագիտությունը:

Պրոֆեսորն ակտիվ մասնակցություն ունի հանրապետությունում իրականացվող բնապահպանական ոլորտին վերաբերող միջազգային համագործակցության աշխատանքներին, որպես փորձագետ մի շարք օրենսդրական, միջազգային ծրագրային փաստաթղթերի մշակման համահեղինակներից է, ինչպես նաև տարբեր գիտական հանդեսների խմբագրական կոլեգիաների («Հայաստանի կենսաբանական հանդես», «Թախտաջյանիա») անդամ:

«Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում» ՀԿ-ի նախագահն է, Հայկական և Ռուսական Բուսաբանական ընկերությունների և ԱՊՀ երկրների Բուսաբանական այգիների խորհրդի անդամ է:

Շուրջ 25 տարի անընդմեջ ղեկավարում է ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտում գործող ատենախոսությունների պաշտպանության մասնագիտական խորհուրդը՝ ներկայիս «Բուսաբանություն, սնկաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ:

Գիտության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար պրոֆ. Ժ. Վարդանյանն արժանացել է բազմաթիվ պարգևների: 2013 թ. ՀՀ նախագահի կողմից արժանացել է պետական պարգևի՝ Անանիա Շիրակացու մեդալի:

Անվանի գիտնական և մանկավարժ, գիտության հմուտ կազմակերպիչ Ժ. Վարդանյանը ներկայումս էլ պատասխանատվության բարձր զգացումով շարունակում է գիտամանկավարժական ու ստեղծագործական գործունեությունը՝ նպաստելով կենսաբազմազանության և անտառային ոլորտի համար մասնագետների պատրաստմանը և հանրապետության էկոլոգիական վիճակի բարելավմանը:

**ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունք
ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի անձնակազմ**

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ

Ժիրայր Վարդանյանի 70 ամյակին

կուրսից արժանանում է Թախտաջյանի անվան կրթաթոշակի, ընտրվում ինստիտուտի գերազանցիկների խորհրդի նախագահ: Բուհ-ն ավարտելուց հետո Ժ. Վարդանյանն ընդունվում է ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրա բուսաբանության ինստիտուտում՝ «Ծառագիտություն» մասնագիտությամբ: 1980 թ. պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը և երկու տարի անց ընտրվում ինստիտուտի «Ծառագիտության» բաժնի վարիչի պաշտոնում: Նրա անմիջական նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ պատրաստվում և հրատարակվում է «ՀՀ բուսաբանական այգիների և դենդրոպարկերի ծառերի ու թփերի անոտացված կատալոգ» (1985 թ.):

1990 թ. նա պաշտպանում է դոկտորական ատենախոսությունը: 2010 թ. ընտրվում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ «Բուսաբանություն» մասնագիտությամբ:

Ժ. Վարդանյանը ինքնատիպ մոտեցում է դրսևորել արիդային պայմաններում բնական դենդրոպարկերի ստեղծման, դրանցում արժեքավոր ու հազվագյուտ բուսատեսակների պահպանության ուղղությամբ: Նրա հետազոտությունների արդյունքներն ամփոփված են ավելի քան 170 գիտական աշխատություններում, այդ թվում՝ 13 մենագրություններում ու դասագրքերում՝ հրատարակ-

ված տարբեր (միջազգային և հանրապետական) գիտական հանդեսներում, միջազգային և տարածաշրջանային գիտաժողովների, կոնֆերանսների նյութերում: Գիտական մեծ արժեք է ներկայացնում՝ «Деревья и кустарники Армении в природе и культуре» մենագրությունը (Երևան, 2003 թ.), որը եզակի աշխատություն է Հայաստանի ծառաբույսերի (բնության մեջ և մշակութային պայմաններում) ուսումնասիրության ոլորտում: 2010 թ. լույս է տեսել «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր Գիրք»-ը, որի ակտիվ նախաձեռնողներից ու համահեղինակներից է Ժ. Վարդանյանը:

Ժ. Վարդանյանի գիտակազմակերպական գործունեությունը դրսևորվել է դեռևս երիտասարդ տարիքում՝ նրա՝ գիտության գծով փոխտնօրենի (1995 թ.-ից) և հատկապես տնօրենի պաշտոնում (2005-2019): Նրա ղեկավարման տարիներին վերանորոգվել և կանոնավոր ջեռուցվել են ինստիտուտի բոլոր մասնաշենքերը, բուսապահոցը, վերականգնվել ու պահպանվում է Բուսաբանական այգու տարածքային ամբողջականությունը:

Նրա անմիջական նախաձեռնությամբ 2017 թ.-ին ինստիտուտում անվանակոչվեց մեր ժամանակների ականա-

ԸՇ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի գիտաշխատողները Եղեգիս գետի կիրճում տանձենու նոր տարատեսակ են հայտնաբերել

ԸՇ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, կենսաբանական գիտությունների դոկտոր Ժանետա Հակոբյանը ԸՇ Վայոց ձորի մարզի Եղեգիս գետի կիրճում հայտնաբերել է նկարագրել է տանձենու նոր տարատեսակ՝ *Pyrus hyrcana Fed. var. yeghegisi Akopian*:

«Վայոց ձորի մարզի Եղեգիս գետի կիրճը՝ Դարեւեգիսի ֆլորիստիկական շրջանը, առանձնանում է վայրի տանձենիների հարուստ տեսակային բազմազանությամբ: Այստեղ իրականացվել է հազվագյուտ և անհետացող տանձենիների ուսումնասիրություն: Եղեգիս գետի կիրճում՝ Վարդահովիտ գյուղի շրջակայքում, հայտնաբերվել և նկարագրվել է տանձենու մոր տարատեսակ: Հավաքվել է հերթաբերումի նյութ, ուսումնասիրվել են ներտեսակային փոփոխականության առանձնահատկությունները՝ օգտագործելով տերևների, ծաղիկների, պտուղների կառուցվածքի մորֆոլոգիական առանձնահատկությունները»,- ասաց ուսումնասիրությունն իրականացրած գիտական խմբի ղեկավար, «Հայաստանի ֆլորայի և բուսականության» էքսպոզիցիոն հոդամասի կուրատոր,

կենսաբանական գիտությունների դոկտոր Ժանետա Հակոբյանը:

Նա նշեց, որ վայրի տանձենիների (*Pyrus L.*) ուսումնասիրությունը Բուսաբանության ինստիտուտի գիտական առաջնահերթ ուղղություններից է, քանի որ Հայաստանը *Pyrus L.* ցեղի հարուստ բազմազանության կենտրոնն է: «Երևանի բուսաբանական այգում վայրի տանձենիների հավաքածուն ունի գիտական, բնապահպանական և կրթական արժեք: Այժմ մեր հավաքածուն ներառում է 20 տեսակ»,- ասաց Ժանետա Հակոբյանը:

Հետազոտությունն իրականացվել է BGCI/ArbNet-ի և Arnold Arboretum գործընկեր կազմակերպության (ԱՄՆ, Բոստոն) աջակցությամբ՝ «Երևանի բուսաբանական այգում Հայաստանի վայրի տանձենիների (*Pyrus L.*) պահպանում» ծրագրի շրջանակներում երիտասարդ գիտնականների մասնակցությամբ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին





ՀՄՍՀ ԱՐՎԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉԸ. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ

Երևան քաղաքի Ավագանու առաջին գումարման վեցերորդ նստաշրջանի՝ 2011թ. դեկտեմբերի 23-ի չորրորդ նիստում Ավագանին միաձայն համաձայնություն տվեց ՀՄՍՀ արվեստի առաջին վաստակավոր գործիչ, արվեստաբան, բանասեր, պատմաբան, մատենագետ, հրատարակչական գործիչ, խմբագիր, պրոֆեսոր Գարեգին Լևոնյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բայրոնի փողոցի շենք 12-ի ճակատային հատվածում տեղադրելու համար: Ամիսներ անց՝ ճիշտ 10 տարի առաջ՝ 2012 թվականին, տեղի ունեցավ Գարեգին Լևոնյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի բացման համոզիսավոր արարողությունը:

Ամթաքույց գոհունակությամբ պիտի նշեն, որ նախագծի հեղինակը ես էի՝ այն ժամանակ Երևան քաղաքի Ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական համեմատողովի նախագահի տեղակալս (տե՛ս <https://www.yerevan.am/edfiles/files/avagani23.12/19.pdf>): Հարցը, ի զարմանս ինձ, դրական լուծում չէր ստանում մեկ տարուց ավելի, քանի որ Երևանի օրենսդիր մարմնի որոշ անդամներ գտնում էին, որ Երևանը գերեզմանոց չէ, և չի կարելի շենքերի պատերը ծածկել համգույցյալների մասին պատմող հուշատախտակներով: Իմ բոլոր հիմնավորումներն առ այն, որ անցած տասնամյակների ընթացքում Երևանում տեղադրված՝ պատմական իրադարձություններն ու նշանավոր մարդկանց հիշատակը հավերժացնող հուշատախտակներն ու հուշաքարերը չափազանց կարևոր դեր են կատարում, որ ճարտարապետական փոքր ձևերի այդ մոնումենտը ոչ միայն զարդարում են քաղաքը, այլև պարունակում են ճանաչողական ու դաստիարակչական մեծ լիցք՝ յուրովի ներկայացնելով մեր քաղաքի ու երկրի պատմությունը, հնչում էին որպես ձայն բարբառող յանապատի...

Երկար «ճակատամարտերից» հետո նախագիծն ընդգրկվեց Երևանի Ավագանու՝ 2010 թ. նոյեմբերի 26-ի չորրորդ նիստի օրակարգում ու... միստի սկզբում հանվեց օրակարգից՝ առաջիկա նիստերից մեկում քննության առնելու նպատակով:

Դրանից հետո շարունակվեց հուշատախտակի ողիսականը...

Բարեբախտաբար իմ և իմ ողջախոհ գործընկերների տևական ու նպատակասլաց «պայքարը» պսակվեց հաջողությամբ. հաղթեց առողջ բանականությունը, և այսօր Երևանի կենտրոնում գտնվող Բայրոնի փողոցի շենք 12-ի կողքով անցնելիս երևանցիները և մայրաքաղաքի հյուրերը մի պահ կանգ են առնում և իրենց հարգանքի տուրքը մատուցում պայծառ մտավորականի անթառամ հիշատակին...

Գարեգին Լևոնյանը ծնվել է Ալեքսանդրապոլում (ներկայումս՝ Գյումրի) 1872թ. նոյեմբերի 21-ին, նշանավոր գուսան Ջիվանու (Սերոբ Լևոնյան) ընտանիքում:

Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի կարգադրությամբ Մոսկվայում կամ Պետերբուրգում սովորելու համար 1896 թ. երեք տարի ժամկետով Էջմիածնի վանքի հաշվին Լևոնյանին նշանակվում է թոշակ: Նա մեկնում է Մոսկվա, իսկ երկու տարի անց՝ Պետերբուրգ, որտեղ 1898-1901 թթ. սովորում է Պետերբուրգի արվեստների կայսերական ակադեմիայում՝ աշակերտելով նկարիչներ Կորովինին ու Ռեպինին: Այս տարիներին նա ծանոթանում և սերտ բարեկամություն է հաստատում Ն.Մառի, Մ.Սարյանի, Հ.Արծաթպանյանի, Ն.Ադունցի, Մոսկվա-

յում ու Պետերբուրգում բնակվող հայ արվեստագետների, գրողների և բանասերների հետ:

1902-ին Լևոնյանը մասնավորժական աշխատանքի է հրավիրվում Էջմիածնի Գևորգյան ճեմարան, որտեղ մինչև 1906թ. դասավանդում է գեղարվեստի պատմություն և նկարչություն՝ շարունակելով իր ուսումնասիրություններն ու հետազոտությունները վանքի հարուստ մատենադարանում:

1906-ին Լևոնյանը մեկնում է Լայպցիգ, իսկ 1907-ին վերադառնում Թիֆլիս, 1910-1911 թթ. դասավանդում է Ներսիսյան դպրոցում, ապա տեղափոխվում Երևան՝ 1926-27-ին դասավանդելով Երևանի գեղարվեստական տեխնիկումում, իսկ կյանքի վերջին տարիներին՝ թատերական ինստիտուտում և պետական համալսարանում:

Գ. Լևոնյանն աշխատակցել է «Նոր դար», «Մշակ», «Հանդես գրական և պատմական», «Ազգագրական հանդես», «Անահիտ» պարբերականներին, հանդես եկել Գ.Լ., Գոշ, Գրասեր, ճռինչ, Մեֆիստոֆել և այլ ծածկանուններով:



Մահացել է Երևանում 1947 թ. հոկտեմբերի 28-ին: Ծանրակշիռ է Գարեգին Լևոնյանի ավանդը խորհրդահայ արվեստագիտության և գրականագիտության զարգացման գործում:

Ողջ կյանքը նվիրելով հայ ժողովրդի նյութական և հոգևոր արժեքների ուսումնասիրությանը՝ Գ. Լևոնյանը քննության է առել արվեստի ու բանասիրության տարբեր ոլորտների՝ մինչ այդ բոլորովին չհետազոտված կամ մասնակիորեն հետազոտված հարցերը: Գ. Լևոնյանը երբեմն հանդես էր գալիս ոչ միայն որպես տվյալ բնագավառի առաջին ուսումնասիրող, այլև տեսաբան (աշուղագիտություն, մատենագիտություն, կիրառական արվեստի պատմություն ևն):

Հայ արվեստաբանության մեջ Գ. Լևոնյանն առաջինն էր, ով փորձեց ի մի բերել հայ արվեստի պատմությունը: Մնայուն արժեքներ են «Արձանագործությունը և քանդակը պատմական Հայաստանում» (1937), «Պարարվեստը հին Հայաստանում» (1940) և «Թատրոնը հին Հայաստանում» (1941) աշխատությունները: Իսկ աշուղագիտական աշխատությունները՝ քսանամյա երիտասարդի «Հայ աշուղներ» անդրամիկ ուսումնասիրությունը (1892), «Հայ ժողովրդական և աշուղական երգերը և նրանց փոխարարությունը», «Սայաթ-Նովա», «Աշուղները և նրանց արվեստը», դրեցին աշուղական արվեստի տեսության հիմքերը: Լևոնյանը գիտական հրատարակության է պատրաստել Սայաթ-Նովայի երգերի (1931, ընդարձակ առաջաբանով), Ջիվանու երգերի (1936) և «Հայ աշուղներ» (1937) ժողովածուները:

Իր բնույթով եզակի է «Հայ գիրքը և տպագրության արվեստը» աշխատությունը (1946), որը ներկայացնում է հայ ժողովրդի ստեղծած գրքային-մատենային հարուստ մշակույթն ու գրատպության բարձր արվեստը (V-XIX դդ.):

Գ. Լևոնյանը կազմել և հրատարակել է դասագրքեր՝ «Հայկական վայելչագրություն և գեղագրություն» (1908) և «Գծագրություն և նկարչություն» (մաս 1-2, 1909):

Իսկ 23-ամյա Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը» ծանրակշիռ ուսումնասիրությունը (1895) դեռևս ձեռագիր վիճակում արժանացել է «Մահակ-Մեսրոպյան» մրցանակի:

Լևոնյանի արժեքավոր հետազոտություններից են

«Գառնիի հեթանոսական տաճարի առեղծվածը» (1941) և «Էջեր հայ երաժշտության պատմության» (1945) աշխատությունները: Իսկ «Հովնաթանյան մաղաչները հայ նկարչության պատմության մեջ» (1938) ուսումնասիրության մեջ Լևոնյանն անդրադարձել է Հովնաթանյան տոհմի տաղանդավոր ներկայացուցիչների արվեստին՝ պատմամատենագիտական փաստերով և վերլուծություններով ներկայացրել Հովնաթանյանների ստեղծագործությունը:

Ամփոփելի են Լևոնյանի տպագիր ու անտիպ ժառանգության պատմաճանաչողական արժեքն ու գիտական նշանակությունը: Սակայն նրա ստեղծագործական, գիտական-հրապարակախոսական գործունեության պսակը դարձավ «Գեղարվեստ» գրական-գեղարվեստական-երաժշտական պատկերազարդ հանդեսը (1908, Թիֆլիս)՝ հայ առաջին արվեստաբանական պարբերականը, որտեղ տպագրվում էին արվեստի բոլոր ճյուղերի՝ ճարտարապետության, կերպարվեստի, երաժշտության, պարարվեստի ու թատերական արվեստի վերաբերյալ պատմական ու տեսական, ինչպես նաև գեղագիտության ու արվեստի փիլիսոփայության, գրականագիտության հարցերին նվիրված հոդվածներ:

Նկատենք, որ Գարեգին Լևոնյանը և Կոմիտասը դեռևս 1905թ. ամռանը որոշել էին Էջմիածնում հրատարակել գեղարվեստական-գրական հանդես, որի երաժշտական բաժնի խմբագիրը պիտի լիներ Կոմիտասը, իսկ կերպարվեստինը՝ Գ. Լևոնյանը:

1906 թ. փետրվարի 25-ին Գ. Լևոնյանը նամակով դիմում է Գևորգյան ճեմարանի վարչությանը՝ ճեմարանում չորս տարի իր ծառայության վերաբերյալ տեղեկանք ստանալու խնդրանքով: Ստանալով տեղեկանքը և լրացնելով անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը՝ ամսագիր հրատարակելու իրավունք ստանալու խնդրանքով Գ. Լևոնյանն ու Կոմիտասը 1906 թ. փետրվարի վերջին դիմում են Երևանի նահանգապետին: Ամիսներ անց՝ 1906 թ. սեպտեմբերին, Երևանի նահանգապետը մերժում է Գ. Լևոնյանի և Կոմիտասի «Գեղարվեստ» խորագրով հանդես հրապարակելու համար ներկայացված խնդրագիրը, պատճառաբանելով, թե Կոմիտասն օտարախառն է, իսկ Վաղարշապատն էլ քաղաք չէ:

«Գեղարվեստում» Լևոնյանը հանդես էր գալիս և՛ որպես խմբագիր, և՛ որպես արվեստագիտական, բանասիրական, փիլիսոփայական և գեղագիտական սովորածավալ ու արժեքավոր հոդվածների հեղինակ: Ինչպես նկատել է Թերեզա Գալստյանն իր «Գարեգին Լևոնյանը և «Գեղարվեստ» հանդեսը» աշխատության մեջ (1979). «Գեղարվեստ» հանդեսը (1908-1922) հայ մամուլի պատմության զարդերից մեկն է, որը, ժամանակի մշակութային նշանակալից, դեռ ավելին՝ բացառիկ երևույթ լինելով, այժմ էլ պահպանել է իր արժեքն ու հմայքը: Իր գիտական ու գեղարվեստական բարձր մակարդակով և նրբաճաշակությամբ դաստիարակել ու կրթել է հայ մտա-



վորականության լայն շրջանների գեղագիտական ու գեղարվեստական ճաշակը, հարստացրել ու ընդլայնել նրանց մտահորիզոնը՝ արվեստը, գրականությունն ու փիլիսոփայությունն ընկալելու ժամանակի ռուս և եվրոպացի առաջավոր մտավորականների մակարդակով:

Եվ պատահական չէ, որ հայ արվեստագետներից Գ.Լևոնյանն առաջինն էր, ով խորհրդային Հայաստանի կառավարության կողմից արժանացավ հանրապետության արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման՝ ծննդյան 60 և գրական-մշակութային գործունեության 40-ամյակի առթիվ (1932):

ԱՆՆԱ ԱՍՏՈՐՅԱՆ
ՀՀ ԳԱՍ արվեստի ինստիտուտի տնօրենի, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ «ՉԱՐԵՆՑ» ԳԻՐԲԸ ՀԱՆՃԱՐԵՎ ԳՐՈՂԻ ՄՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱՐԱՆՄԱՆ ԲԱՆԱԼԻՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է

ՆԱԽԻՐԱԿԱՆ Է Ե. ՉԱՐԵՆՑԻ ԾԱՆՈՅԱՆ 125-ԱՄԻԱ ՀՈՐԵՍՅԱՆԻՆ

Այս տարի լրանում է եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակը, ու այն պարտավորեցնում է հետադարձ հայացք նետել հանճարեղ գրողի ստեղծագործությանը տրված գնահատականներին:

Հատկապես եղիշե Չարենցի մասին ուշագրավ ու ծավալուն մենագրություններ գրվեցին անհատի պաշտամունքի մերժումից և 1956-ին տեղի ունեցած խորհրդային Միության կոմունիստական կուսակցության XX համագումարից հետո:



Արդեն 1954-ին խորհրդային Միության ղեկավարներից մեկը՝ Անաստաս Միկոյանը, Երևանի օպերային դահլիճում հայ հասարակության ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ հիշեցնում է Չարենցի բռնադատված լինելը, և դահլիճի մարդիկ հոտնկայա կես ժամ ծափահարում են: Չարենցի, Ալեսե Բակունցի, Վահան Թոթովենցի և 1937-ին բռնադատված մյուս գրողների ստեղծագործությունները սկսեցին տպագրվել, և դրանք արդեն վերստին ուսուցանվում էին դպրոցներում ու բուհերում: Եղիշե Չարենցի ստեղծագործության հիման վրա գրվեցին դոկտորական ու թեկնածուական ատենախոսություններ: Դրանք կգրվեն նաև հետագայում:

Չարենցի մասին գրքեր են գրվել նաև արտասահմանում: Դրանցից մեկն է 1957-ին Կահիրեում լույս տեսած Վահան Նավասարդյանի գիրքը՝ «Չարենց (Յուշեր և խորհրդածութուններ)» խորագրով:

Վահան Նավասարդյանի գիրքը երկար ժամանակ արգելված էր, որովհետև նա եղել է դաշնակցական գործիչ: Սակայն նրա մասին Չարենցի «Հանգուցյալ պարոնը կամ պարոն հանգուցյալը» երգիծապատումը, որը 1925-ին շարունակաբար տպագրվեց «Խորհրդային Հայաստան» օրաթերթում, ծանոթ է չարենցագետներին:

Չարենցի՝ Եվրոպա կատարած ուղևորությանը և «Հանգուցյալ պարոնը կամ պարոն հանգուցյալը» երգիծապատումին անդրադարձել են շատերը: Այդ գրականագետներից է Գառնիկ Անանյանը, որը «Եղիշե Չարենց» գրքում ներկայացնում է, թե ինչ տպավորություն է ստացել Չարենցը պոլսահայ գաղութի կյանքից. «Թե որքան ողորմելի է այստեղ հայ գաղութի կյանքը, դժվար է պատկերացնել, մարդիկ պարզապես քարշ են տալիս սովերային խղճուկ մի գոյություն, աշխատում են որքան կարելի է հաճոյանալ թուրք կառավարությանը, քծնում են, մեղայի գալիս, իսկ կառավարությունը, թուրք հասարակությունը, մամուլը և այլն, աշխատում են պահել նրանց արհամարհանքի, իրա-

վական տեռորի, պրովոկացիաների, հայիոյանքների այնպիսի մի մթնոլորտում, որից մարդու մազերը կարող են, ինչպես ասում են, բիզ-բիզ կանգնել»:

Վ. Նավասարդյանի գրքին քաջածանոթ է գրականագետ Ալմաստ Ջաքարյանը, որը Չարենցի կյանքին, գործին և ապրած ժամանակին նվիրել է եռահատոր ծավալուն աշխատություն: Իր աշխատության երկրորդ գրքում նա ունի եմբաքաժին, որը կոչվում է «Վահան Նավասարդյան... և Չարենց ու Իսահակյան»:

Ալմաստ Ջաքարյանն օգտվել է Նավասարդյանի «Չարենց» գրքի երկրորդ հրատարակությունից, որը տպագրվել է Թեհրանում 1962-ին:

Կահիրեում Նավասարդյանի «Չարենց» գիրքը 1957-ին լույս է տեսել, երբ հեղինակն արդեն կենդանի չէր: Գրքի սկզբում դրված «Երկու խոսքում» ասվում է, որ այս գիրքը Չարենցի ստեղծագործության ու գաղափարական ներքին աշխարհի վավերագրություն է, որը որպես մեծակշիռ վկայություն մնալու է հայ գրականության պատմության մեջ:

Նավասարդյանի «Չարենց» գրքում հանճարեղ բանաստեղծի ստեղծագործության խորքային մեկնաբանությանը միահյուսված են գրքի հեղինակի կենսագրության դրվագները, որոնցով ընթերցողը հիմնալի պատկերացում է կազմում, թե ինչպիսին է եղել հայ կյանքը խորհրդային Հայաստանի առաջին տարիներին: Տեսնում ենք Նավասարդյանի մոր՝ բնիկ Արցախցու զգայուն ու մարդասեր կնոջ կերպարը, որի համար հայրենիքն ու որդին հավասարապես թանկ էին:

Նավասարդյանը Չարենցին հանդիպել է 1925-ի սկզբին Հռոմում, որտեղ մի քանի օր կանգ է առել Փարիզից Եգիպտոս վերադառնալու ճանապարհին: Նա հիշում է, թե ինչպես Նիկոլ Աղբալյանը իր մի դասախոսության մեջ հայտարարում է նոր բանաստեղծի ծնունդը. «Աղբալյանի դասախոսությունը լսելով՝ կարծես թնդաց Երևանը, և անվանի գրադատի ավետիսը խորունկ արծազանքներով անցավ բերանից բերան, թերթից թերթ և քաղաքից քաղաք: Չարենցն այդ իրողության մասին գրել է «Չարենց-Նամեն» պոեմում.

Էլ ինչու ծիծաղեր հոգիս,
Երբ Նիկոլ Աղբալյանը մի օր
Սարսելով դահլիճն ու ֆոյեն,
Որ ծնվել է մեծ մի պոետ...
Ցնծա՛, Նաիրյան աշխարհ,-
Ցնծա՛... Եղիշե Չարենց:

Չնայած Չարենցը Եվրոպայից վերադառնալուց հետո խիստ երգիծել էր դաշնակցական Նավասարդյանին, վերջինս ասում էր. «Այդ օրից մինչև բանաստեղծի եղերական մահը մնացի իր անմահ քնարի ջերմ սիրողներից մեկը»:

Ողջ գրքի մեջ Չարենցի քնարերգությանը, նրա գաղափարական էվոլյուցիային տրվում է մի գնահատական, որը խիստ անհատական է, բայց և ելակետային բազում հարցերում, ու հարստացնում է չարենցագիտությունը:

Նավասարդյանը մանրամասն վերլուծում է Չարենցի «Եպիկական լուսաբաց» և «Գիրք ճանապարհի» ժողովածուները՝ մատնացույց անելով դրանց գաղափարական փոփոխությունները:

Նա անդրադառնում է նաև այն սոնետին, որը Չարենցը գրել էր՝ ծաղրելով դաշնակցականներին:

Նավասարդյանը նախապես իմացել էր, որ Չարենցը գնալու է Հռոմի ազգային թանգարան, ու այնտեղ է գնում նրան հանդիպելու: Հետո միասին Հռոմի շքեղ Via Imperia պողոտայով քայլում են և հասնում այն կետին, որտեղ բարձրաքանդակ կային երեք հին քարտեզներ, որոնք ներկայացնում էին աշխարհը Քրիստոսի ծննդից առաջ. «Այս քարտեզի վրա՝ Փոքր Ասիայի մեջ, շքեղորեն փռված էր անմեկնելի խորհուրդներով լի մեր անմահ հայրենիքը՝ Հայաստան: Ուրիշ ազգեր՝ թուրք, վրացի, արաբ և այլն, չկային:

Պահը, վայրը, մեր թվարկությունից շուրջ ութ դար առաջ ապրող Հայաստանի քարտեզն էր երբեմն աշխարհին տիրակալած Հավերժական Հռոմի մեկ պատմական պատին և իր իսկ՝ խելագարված ամբոխների երիտասարդ և հզոր երգչի ներկայությունը. այս ամենն ինձ տրամադրեցին Չարենցի շքեղ երգը՝ «Ես իմ անուշ Հայաստանին» քաղցրությամբ և լի հոգիով արտասանելու»:

Նավասարդյանն անդրադառնում է Պողոս Մակինցյանի՝ Չարենցի քնարերգության գաղափարական շրջանաբաժանմանը. «Առաջին՝ եղել է մինչև հեղափոխական շրջանի երգիչ, երկրորդ՝ ապրել և գործել է իբրև «պատերազմի և հեղափոխության մարտիկ», երրորդ՝ Հայաստանի խորհրդայնացումից հետո դարձել է խորհրդային Հայաստանի վերածնության արտահայտիչը»:

Սակայն Մակինցյանի այս գնահատականը և Չարենցի փառքը շարժում էին շատերի նախանձը, ու բանաստեղծի դեմ գրվում են մերժողական հոդվածներ: Գ. Վանդեցին, օրինակ, 1927-ին «Եղիշե Չարենց» գրքույկում գրում է. «Չարենցը մեծ կոլեկտիվի աշխատավորական մասնիկը չէ, նա չի ապրում երկրի ստեղծագործական պաթոսով, եռուն ընթացքով, այլ մինչև այսօր դեռ ապրում է ներքին անհատական պաթոսով»:

Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծական հրաշքը որակվում է որպես սպանիչ նացիոնալիզմի դրսևորում:

Ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանը հատուկ և ծավալուն ուսումնասիրություն ունի՝ նվիրված «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության անցած գրաքննադատական հալածանքներին:

(Շարունակելի)

Սեկետա ԴՈԼՈՒՄԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱՍ ԹԳՄԱԿԻՑ ԱՆՂԱՄ, ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈՎՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ

ՀՀ ԳԱՍ-ում տեղի ունեցավ ԵԳԱԾ-ի «Երիտասարդ գիտնականների վերապատրաստման ծրագրի» հաղթողների հետ պայմանագրերի կնքման արարողությունը

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում սույն թվականի օգոստոսի 30-ին տեղի ունեցավ «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» շրջանակներում իրականացվող «Երիտասարդ գիտնականների վերապատրաստման ծրագրի» հաղթողների հետ պայմանագրերի կնքման արարողությունը:

ՀՀ ԳԱՍ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանը ներկայացրեց «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» նախապատմությունն ու առաքելությունը: «2011 թ.-ին երիտասարդների մեծ խումբ իրականացրեց լայն համրային արշավ, ինչի արդյունքում ստեղծվեց ԵԳԱԾ-ը, որի շնորհիվ 11 տարի շարունակ երիտասարդ գիտնականներին տրվում է 100 միլիոն դրամի աջակցություն: ԵԳԱԾ-ն օրինակ է նրա, թե ինչպես կարող է համայնքն ինքնակազմակերպվել, նախաձեռնություն առաջ քաշել և, ի վերջո, հասնել արդյունքի:

Ի սկզբանե ԵԳԱԾ-ի գործունեության հիմքում դրված են եղել կարևոր սկզբունքներ: Դրանցից մեկն այն է, որ ԵԳԱԾ-ի փորձագիտական խորհուրդը գործում է բացարձակ ինքնուրույն: Որևէ միջամտություն իր կայացրած որոշումներին որևիցե տեղից չի կարող, և սա շատ կարևոր է: ԵԳԱԾ-ի գաղափարախոսության հիմքում դրվել է պիլոտային ծրագրերի գաղափարը, այնպիսի ծրագրերի, որոնք առաջին անգամ են իրականացվում: Դրանք մշակույթ ստեղծող պիլոտային ծրագրեր են: Հաջողության դեպքում դրանք տեղափոխվում են ավելի մեծ շրջանակներ: Այս տարիների ընթացքում բազմաթիվ են եղել նման օրինակները: Հիշե՛ք, դուք այս ծրագրի առաջյալներն եք: Որքանով կհաջողե՛ք դուք, այդքանով կհաջողի ԵԳԱԾ-ը, կհաջողի մեր պետությունը, և այդքանով մենք առաջ կշարժվենք: Մաղթում են ձեզ ամենաբարձր բարձունքների նվաճում», - ասաց Արթուր Իշխանյանը:

ՀՀ ԳԱՍ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին





ՂԱՐՁՅԱԼ ԲԱԶՄԱԳԱՐԶԱՐ ՍԵՎԱՆԻ ՄԱՍԻՆ

Սևանա լիճը իրեն շրջապատող լեռնապարերով ու մյուս բնական հիասքանչ համակարգերով կենսատու և զնայելի մի գոհար է: Այն իր մեծությամբ աշխարհի երկրորդ լեռնային լիճն է, որտեղ կան արժեքավոր ձկների տեսակներ, որոնցից մի քանիսը էնդեմիկ են: Լիճը քաղցրահամ է և որպես խմելու ջրի շտեմարան ռազմավարական կարևոր նշանակություն ունի ոչ միայն Հայաստանի, այլև տարածաշրջանի մյուս երկրների համար: Այն սնուցում է խմելու ջրի հազարավոր աղբյուրների, մեղմացնում ավազանի կլիմայական պայմանները, խիստ նպաստավոր պայմաններ ստեղծում ապրելու համար: Այս լճի դերը առանձնահատուկ բարերար է նաև գյուղատնտեսության և անասնապահության համար:

Ինչպես հանճարեղ գրող Ավետիք Իսահակյանն է ասել. «Սևանա լիճը Հայաստանի աչքն է» և այն պետք է սրբորեն պահպանել: Օտարները նույնպես հիացնումքով են խոսում այս լճի մասին և Արարատ լեռան հետ մեկտեղ այն ընկալում որպես Հայաստանի խորհրդանիշ: Սևանա լիճը որպես հատուկ պահպանվող օբյեկտ, ընդգրկված է «Ռամսար» միջազգային կոնվենցիայի ցանկում:

Մինչ մակարդակի իջեցումը Սևանա լիճը 1916 մետրով ծովի մակերեսից բարձր էր, պարունակում էր 58,5 մլրդ մ³ ջուր, որը առանձնացվել է իր բարձր որակով և յուրահատուկ ջրային կենդանիներով: Անցյալ դարում լճի մակարդակը իջեցրին 20 մետրով, որի հետևանքով լճում սկիզբ առան բազմաթիվ ծայրաստիճան վտանգավոր գործընթացներ:

Սևանա լճում դարերի ընթացքում կուտակված ջրի օգտագործմամբ շատերն են գայթակղվել: Օրինակ, Լեմբորանի դաշտը Սևանա լճի ջրով ոռոգելի դարձնելու՝ ցարական Ռուսաստանի ծրագիրը խափանվեց միայն ռուս-ճապոնական պատերազմի պատճառով: Իսկ դրանից մոտ 20 տարի անց, երբ հիդրոէլեկտրակայանների կառուցումը ծավալվեց, խորհրդային իշխանությունը որոշեց լճում կուտակված ջուրը օգտագործել հիմնականում էլեկտրաէներգիա ստանալու համար: Ահա թե ինչու, Սևանա լճի ջրի էներգետիկ պաշարների օգտագործման նպատակով, 1930 թվին ստեղծվեց «Սևանա լճի կոմիտե», որը պետք է իրականացներ հետևյալ ծրագիրը՝ 1. Հետևյալ տնտեսության զարգացման համար ստեղծել հզոր էներգետիկ բազա, 2. Արարատյան դաշտում ոռոգել 130 հազար հա հող, 3. կարգավորել Անդրկովկասյան էներգահամակարգը: Այս նպատակին հասնելու համար ծրագրվել էր՝ լճի մակարդակի իջեցմամբ փոքրացնել ջրի հայելու մակերեսը, հետևաբար՝ նվազեցնել գոլորշիացումը:

Նախատեսված էր 50 տարիների ընթացքում տարեկան լճից բաց թողնել մեկ միլիարդ 25 միլիոն մ³ ջուր, իսկ Սեծ Սևանի ցամաքեցված հատակը օգտագործել որպես վարելահող: Լճի մակարդակը 50 մետր իջեցնելուց հետո պետք է մնար միայն Փոքր Սևանը՝ 239 կմ² մակերեսով: Սակայն հետագայում պարզ դարձավ, որ լճի մակարդակի իջեցումը գիտականորեն ու տնտեսապես հիմնավորված չի եղել, հաշվարկները թերի են կատարվել ու սխալ, օրինակ, ցամաքեցված տարածքները հնարավոր չէ օգտագործել որպես վարելահող, դեպի սպառում է գնում դարերի ընթացքում կուտակված և ռազմավարական մեծ նշանակություն ունեցող քաղցրահամ ջուրը, անշեղորեն վատանում է ջրի որակը. մակարդակի իջեցմանը զուգահեռ մեծանում է շատ վտանգավոր ջրիմուռների քանակը, որոնք մինչ այդ լճում չեն եղել, նվազում է իշխան, սիգ և մյուս ձկնատեսակների քանակը...

Բնագավառի գիտնականները բարեխղճորեն կատարում էին իրենց ուսումնասիրությունները, սակայն ինչ-ինչ պատճառներով չէին դիմում պետական ատյաններին: Այս խնդիրները համարձակություն ունեցավ բարձրացնելու բողջառնչ հայրենասեր, իմեծերային երկրաբանության

մասնագետ, երջանկահիշատակ ակադեմիկոս Գևորգ Տեր-Ստեփանյանը, որին Գիտությունների ակադեմիայի հրատարակած «ՀԽՍՀ էներգետիկայի զարգացումը 50 տարիներին» գրքում անվանել են խորհրդային Միության ու էներգետիկայի թշնամի:

Մեր կարծիքով Տեր-Ստեփանյանի այդ խիզախության շնորհիվ էր, որ նաև հարակից բնագավառների գիտնականների, պետական գործիչների և հասարակության ուշադրությունը բեռնվեց Սևանա լճի վրա և հիմնականում նրա շնորհիվ էր, որ այս լճի փրկության ծրագրի հիմքը դրվեց...

Խորհրդային Միության օրոք լճի մակարդակը իջեցվել է 20 մետրով, սակայն տեսնելով բացասական հետևանքները և գիտակցելով կորստի մեծությունը՝ կտրուկ փոխեց Սևանա լճի նկատմամբ իր վարած քաղաքականությունը և 1961 թվականին որոշում կայացրեց՝ զգալիորեն նվազեցնել լճից վերցվող ջրի քանակը, ինչպես նաև Արփա գետից տարեկան 250 մլն մ³ ջուր ուղղել Սևանա լիճ և բարձրացնել լճի մակարդակը: Այդ նպատակով սկսվեցին Արփա-Սևան ջրատար թունելի կառուցման աշխատանքները: Նաև կայացվել է Որոտանի թունելի կառուցման որոշումը՝ Որոտան գետից տարեկան 150 մլն մ³ ջուր Սևանա լիճ տեղափոխելու նպատակով:

Սևանա լճի նկատմամբ խորհրդային իշխանությունների սրտացավ վերաբերմունքը միայն դրանով չսահմանափակվեց: 1978 թվին ԽՍՀՄ Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն և Միմիստրների խորհուրդը որոշում կայացրին Սևանա լճի մակարդակի բարձրացման միջոցառումների և կոմպլեքս ուսումնասիրություններ կատարելու վերաբերյալ: Այդ որոշմամբ համապատասխան նախարարություններին հանձնարարվեց 1979-82 թվականներին մշակել Սևանա լճի ավազանի բնական պաշարների պահպանության և դրանց արդյունավետ օգտագործման կոմպլեքս ուղղված ծրագիրը: 1978 թվին ստեղծվեց «Սևան» ազգային պարկը:

Առանց համապարփակ ու լուրջ հաշվարկների Սևանա լճի մակարդակի իջեցումը և դրա հետևանքով առաջացած բարդագույն խնդիրները հավանաբար շոկային վիճակ էին առաջացրել գլխավորապես պետական պաշտոնյաների շրջանում: Կարելի է ենթադրել, որ հենց այդ էր պատճառը, որ լճի մակարդակի բարձրացման նպատակով ոչ միայն կառուցվեց աշխարհում եզակի, 70 կմ երկարությամբ Որոտան-Արփա-Սևան ջրատար թունելը, այլև ծրագրվեց Սևանա լիճ ուղղել եղեգիս, Հերիեր, Փամբակ, Գետիկ, Ձորագետ, Դեբեդ, Տերտեր, Շամխորջայ, Շամսիր, Գապտակչայ, Ջուլյան, Կյուրակ, Բուզլուկ, Գերան... գետերի, ինչպես նաև Հերիերի ջրամբարի ջրերի մի մասը: Այդ նպատակով պիտի կառուցվեին մոր թունելներ ու ջրամբարներ, բազմաստիճան հզոր պոմպակայաններ, առանձին դեպքերում ջուրը պետք է մղվեր ավելի քան 1 կմ բարձրության վրա: Սրանց համար կատարվել են մանրագին հաշվարկներ անհրաժեշտ ներդրումների չափի, լիճ տեղափոխվելիք յուրաքանչյուր մեկ մ³ ջրի համար պահանջվող զումարի, տնտեսությանը հասցվելիք վնասների ու օգուտների վերաբերյալ:

Կարծում ենք՝ հարևան հանրապետության գետերի ջրերի մի մասը Սևանա լիճ ուղղելու անհրաժեշտություն չկար, երբ միայն Արփա-Սևան թունելի բարեխիղճ շահագործումը և տարբեր պատրվակներով լիճ լցվող ջուրը չգողանալը բավարար էին, որ մոտ 15 տարիների ընթացքում լճի մակարդակը նախատեսված միջին՝ 1903,5 մ., հասներ, այսինքն՝ մակարդակը բարձրանար 6,5 մետր: Օրինակ, 2002-2006 թթ. հինգ տարիներին լճի մակարդակը բարձրացել է 2,29 մետրով: Նշենք, որ առանձին տարիներին լճի մակարդակը բարձրացել է մոտ մեկ մետր:

Հավանաբար բոլորը չէ, որ գիտեն, թե ինչու է նախա-

տեսված լճի մակարդակը բարձրացնել ոչ թե մինչև իր նախնականը՝ ծ. մ. 1916 մ. այլ մինչև 1903,5 մ: ԽՍՀՄ իշխանության հանձնարարականով 39 գիտական հաստատություններ, ուսումնասիրելով Սևանա լճի խնդիրը, իրենց եզրակացությունները հանձնել են ԽՍՀՄ ԳԱ լճաբանության ինստիտուտ, որը, համադրելով այդ եզրակացությունները, եկել է այն համոզման, որ առաջին փուլում լճի մակարդակը պետք է հասցվի այն միջը, երբ ջրի որակը համապատասխանում էր պահանջվածին, և միայն դրանից ցածր մակարդակում է սկսվել ջրի աղտոտման գործընթացը, իսկ այդ միջը ծ. մ. 1903,5 մ է: Եվ սա էլ դարձել է Սևանա լճի փրկության-պահպանության ծրագրի առանցքը: Ըստ այդ ծրագրի՝ Սևանա լճի այդ մակարդակը պետք է մի քանի տարի պահպանել նշված միջում: Եթե վերանան լճում գոյություն ունեցող վտանգավոր ու անցանկալի գործընթացները, ապա լճի մակարդակը կպահպանվի այդ միջում, իսկ եթե ջրի որակը չհամապատասխանի պահանջվող չափանիշներին, և լճում շարունակվեն անցանկալի գործընթացները, ուրեմն պետք է շարունակել մակարդակի բարձրացումը:

Այս ծրագիրը կյանքի կոչվեց և հաջողությամբ իրականացվում էր՝ լուրջ հաջողություններ գրանցելով: 1991 թվին լճի մակարդակը բարձրացավ մինչև 1898,2 միջը, միայն Ադրբեջանի կողմից Հայաստանի համապարփակ շրջափակումը խանգարեց այդ իրաշալի ծրագրի լիարժեք կատարմանը (1993-ին լճից բաց է թողնվել 1 մլրդ 643 մլն մ³ ջուր, որը համարժեք է լճի մակարդակի իջեցմանը 1,22 մետրով: Ջրի այդ քանակը պետք է որ արտադրած լիներ 2,8 կվտ ժամ էլեկտրաէներգիա, որ շրջափակման պայմաններում ապահովեց ՀՀ կենսական նշանակություն ունեցող օբյեկտների գործունեությունը): Եթե ջրի ելքը 1,643 մլրդ մ³ է և դա համապատասխանում է մակարդակի 1,22 մ իջեցման, սակայն այդ տարի մակարդակը իջել է միայն 50 սմ, ինչը պարզորոշ ցույց է տալիս, որ ջրբողի բացառման պայմանում այդ տարի լճի մակարդակը ոչ թե կիջներ, այլ կբարձրանար 72 սմ-ով:

Դժբախտաբար, այս գործում ադրբեջանական չարիքին ավելացավ ևս մեկը: 2000 թվին Հայաստանի կառավարությունը ընդունեց Համաշխարհային բանկի կողմից 1996-99 թթ. մշակված՝ «Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման ծրագիրը» (Lake Sevan Action Program, Սևանա լիճ՝ գործողության ծրագիրը, ինչ-ինչ պատճառներով թարգմանվել է «Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման ծրագիր»): Այս ծրագիրը կտրականապես դեմ է Որոտանի թունելի կառուցմանը և շահագործմանը, երբ 21,6 կմ երկարությամբ թունելի հորատանքի ավարտմանը մնացել էր ընդամենը 0,8 կմ: Այդտեղ ասվում է. «Որոտանի թունելի շինարարության ավարտման մտահոգումից պետք է ձեռք քաշել», միաժամանակ ակնարկվում է, որ Սևանա լիճ ուղղվելիք 150 մլն մ³ ջուրը նաև այլ տեր ունի, երևի նկատի ունի հարևան հանրապետությունը: Այս ծրագիրը անտեսում է Արփա-Սևան թունելի նորոգումը, իսկ լճի մակարդակը 6 մ բարձրացնելը պետք է իրականանա 47-50 տարիների ընթացքում, քանի որ, իբր, արագ բարձրացումը կարող է Հայաստանին մեծ տնտեսական վնասներ պատճառել:

Մեզ համար դեռևս հասկանալի չէ, թե Համաշխարհային բանկը ինչու չի ցանկանում Սևանա լճում շատ ջուր տեսնել: Այս ծրագրի պահանջներին համապատասխան ստեղծվեց Սևանա լճի փորձագիտական հանձնաժողովը, որով կառավարության ֆունկցիան հանձնվեց հասարակական կազմակերպությանը, ընդունվեցին «Սևանա լճի մասին» օրենքը և «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրեր» (անհմաստ ու անիրականալի բառակապակցություն) և այլ փաստաթղթեր, որոնց առկայությունը փաստորեն խոչընդոտում է լճին վերաբերող խնդիրների լուծումը, գլխավորապես մակարդակի բարձրացումը:

Այս գայթակղիչ ու անհասկանալի վերնագիրը կրող ծրագիրը մոտ 25 տարի է, ինչ դարձել է Սևանա լիճը կառավարող մի յուրահատուկ սահմանադրություն և առ այսօր շարունակում է խոչընդոտել, օրինակ, լճի մակարդակի բնական բարձրացումը:

2005 թվականին հրապարակվեց այն փաստը, որ ՀՀ կառավարությունը խիստ անհանգստացած է, որ լճի մակարդակը բարձրանում է ավելի արագ, քան օրենքով սահմանվածը: Այս առումով բնապահպանության նախարարը ԳԱԱ նախագահին գրում է, թե ներկայումս Սևանա լճի մակարդակի շուրջ 1,6 մետրով բարձրացման հետ կապված բազմաթիվ բնապահպանական (ծառաթփային կենսաբազմազանության անկում, թռչունների բնադրավայրերի ոչնչացում...) խնդիրներ են առաջացել:

Այստեղ զարմանալի այն է, որ հենց այդ նմանի հեղինակի ղեկավարած գերատեսչության կողմից պետք է ծառաթփերը մաքրվեին-վերացվեին մինչ մակարդակի բարձրանալը, իսկ թռչունները «գրանցված» չեն նույն բնադրավայրերում:

Ավնհայտորեն լճի մակարդակի բարձրացման խոչընդոտ է ՀՀ կառավարության՝ 2006 թվի այն որոշումը, որով Սևանա լճի ավելոծման միջը 5 մետրից իջեցվեց 1 մետր, նաև ավաներձ տարածքներում նորանոր շինություններ կառուցելու համար:

ՀՀ կառավարությունը ամեն ինչ արել ու անում է, որ լճի մակարդակի բարձրացումը իրականանա Հա-

ԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ. ՄԱՍ 4.

ԸԻՄՆԱՐԱՐ, ԿԻՐԱՌԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հայաստանում գիտության դիֆերենցիացիան և ինտեգրումը՝ արժագանք գիտության բովանդակության և կառուցվածքի փոփոխությունների ամիրաժեշտության առումով: Ժամանակների մարտահրավերներն ու լուծումները:

Սոցիալական, գիտական ու տեխնոլոգիական առաջընթացի բնական միտումը գիտության դերի բարձրացումն է ժամանակակից հասարակության կյանքում: Գիտության հարաբերական անկախությունը դրսևորվում է նրանում, թե ինքն ինչքանով է ազդում տնտեսության, քաղաքականության, իրավունքի, արվեստի վրա: Նրա ամենակարևոր կիրառումը կրթության ու արտադրության հետ հարաբերություններն են, իսկ ներքին օրենքները՝ տարբերակումն ու ինտեգրումը: Վերջիններս ապացուցում են ժամանակակից գիտական մոտեցումների բաժանման հարաբերականությունը, գրանցում տարբեր տեսակի գիտելիքների մեկուսացումը: Այսօր գիտական ուսումնասիրությունը կարող է հասնել զարգացման այնպիսի մակարդակի, երբ ստեղծվում է մի իրավիճակ, որը ցույց է տալիս, որ հետազոտության համալիր արդյունքը չի կարող տրվել գիտության մեկ ճյուղի ուսումնասիրության շրջանակում:

Գիտության ինտեգրումը ենթադրում է նաև դրա տարբերակումը ըստ պահանջի: Օրինակ, կիբեռնետիկան ոչ միայն տարբեր գիտությունների, մեթոդների ու տեսությունների ինտեգրման տրամաբանական արդյունք է, այլև գիտելիքների տարբեր ճյուղերի նախնական խոր տարբերակման հետևանք: Կամ ֆիզիկական և քիմիական մեթոդների ներթափանցումը կենսաբանություն, բժշկություն կամ այլ բնագավառ, ինչպես նաև գիտությունների մաթեմատիկա, կիբեռնետիկա, տիեզերականացումը և էկոլոգիականացումը վկայում են տարբեր երևույթներում ընդհանուր և հիմնարար հատկությունների, կողմերի, գործառույթների և օրենքների հայտնաբերման մասին: Գիտությունների տարբերակումը տանում է դեպի խիստ մասնագիտացում, պահանջում է նեղ պրոֆիլ ունեցող գիտնականներ և գիտնականների, կոլեկտիվների, հաստատությունների որոշակի մեկուսացում: Իսկ գիտությունների ինտեգրումը հեռացնում է տարբերակման բացասական գաղափարական, տրամաբանական, մեթոդաբանական, գիտատեխնիկական, գիտատեխնոլոգիական և տեղեկատվատեխնոլոգիական հետևանքները՝ որոշ չափով լուծելով հակասությունը:

Այստեղից առաջ է գալիս միջոլորտայնության անհրաժեշտության գաղափարը գիտական հետազոտություններում: Կախված լուծում պահանջող բարդ գիտական խնդրի առանձնահատկությունից ու նպատակից, անհրաժեշտություն է առաջանում դիտարկելու տարբեր ոլորտների ներդաշնակ ինտեգրումը մեթոդաբանական, գիտատեխնիկական կամ կամ տեխնոլոգիական առումով: Սա էլ իր հերթին պահանջում է նոր գիտությունների կամ ժամանակակից ճյուղերի ստեղծում: Այսօր առավել շատ, քան երբևէ առկա է միջոլորտային ուսումնասիրությունների պահանջարկ: Դա

պայմանավորված է բնության ու հասարակության մարտահրավերների բարդությամբ ու համակապակցվածությամբ: Այս իրավիճակը պահանջում է գիտական խնդիրների լուծման համար համախմբվել տարբեր մասնագիտություններ ունեցող գիտնականների, կամ որոշ գիտնականների, վերապատրաստվել՝ ընդլայնելու իրենց գիտելիքները, ինտեգրելու այլ գիտելիք ըստ անհրաժեշտության: Այս գործընթացի արդյունավետ իրականացման համար հարկավոր է ստեղծել կառուցվածքային հիմք, այսինքն՝ վերափոխել գիտական որոշ կենտրոններ կամ ստեղծել նորերը, համակարգել նրանց աշխատանքը՝ օգնելու նվազագույն խոչընդոտներով ու դժվարություններով իրականացնել արդյունավետ գիտական հետազոտություններ: Հայաստանում այսօր անհրաժեշտ է գիտության արդիականացում: Այդ արդիականացումը պետք է կազմակերպվի՝ հաշվի առնելով և համադրելով զարգացման միջազգային տեղեկանքներն ու տեղական պահանջները: Այս ուղղությամբ կա վառ արտահայտված հիմնախնդիր գիտության բնագավառում:

Մյուս կողմից արդյունաբերական գերակա ճյուղերի որոշ սպեցիֆիկ առաջընթացը կարող է պահանջել գիտության դիֆերենցիացիայի միջոցով զարգացնել նոր նեղ ուղղություններ: Հայաստանում առանձնապես կաղում է կիրառական գիտությունը, այդ բացը լրացնելու համար կարելի է ստեղծել նոր գիտական խմբեր համալսարաններում կամ փոքր գիտական կենտրոններ, որոնք անմիջականորեն ուղղված կլինեն լուծելու նման խնդիրներ: Պարտադիր չէ կենտրոնացնել գիտությունը մայրաքաղաքում, այնքան էլ արդյունավետ չէ գիտությունն ու կրթությունը ամբողջությամբ տեղակայել այլ մարզային վայրում: Ավելի նպատակահարմար է համալսարանները ըստ գերակա մասնագիտական ուղղությունների տեղադրել՝ բաշխելով ու կապելով այն մարզերին, որոնցում նախատեսված է տնտեսության զարգացման այս կամ այն ուղղությունը: Այդ մոտեցմամբ լուծվում են նաև մի շարք այլ հարցեր, որոնցից են երկրի տարածքով կրթված կադրերի համաչափ բաշխումը, համակապակցված ինֆրակառուցվածքի ստեղծումը, մարզերի ներդաշնակ զարգացումը և այլն: Համալսարաններում կամ կից կարելի է ստեղծել, օրինակ՝ Կիրառական երկրագիտության կենտրոն կամ Գյուղատնտեսական տեխնոլոգիաների գիտական կենտրոն՝ նպաստելով գիտական արժեքների տարածմանը գիտության դիֆերենցիացիայի շրջանակներում: Դրանից նաև կշահի ողջ հանրությունը: Այսինքն՝ լուծումը ունի նաև հասարակական կոմպոնենտ:

Մյուս հարցը, որ պահանջում է լուծում, Սևանա լճի գիտաարդյունաբերական կենտրոնի ստեղծումն է: Այդ կառուցվածքային միավորը թույլ է տալիս բարձր արդյունավետությամբ իրականացնել լճի համալիր ուսումնասիրություններ՝ խուսափելով աղմկոտ հստատարի, կառավարչական ու մեթոդաբանական խոչընդոտներից, որոնք կարող են ծագել տարբեր ինստիտուտներում Սևանի խնդիրներով

զբաղվող լաբորատորիաների պայմաններում, ոչ համադրելի տվյալների առկայության ներքո, թույլ կտա համալիր ուսումնասիրություններ իրականացնել բարդ էկոհամակարգի միջոլորտային դաշտում՝ դիտարկելով ֆիզիկական, քիմիական, կենսաբանական, էկոլոգիական, տնտեսական խնդիրների լուծումների հավասարակշռմամբ: Նաև այս մոտեցումը լավագույն տարբերակներից է խուսափելու հետաքրքրությունների կոնֆլիկտից, ուսումնասիրությունների կրկնությունից, ֆինանսական ծախսերի ոչ ռացիոնալ կիրառումից:

Գիտության զարգացման ազատ ու արդյունավետ պայմանների ստեղծման շրջանակում կարևոր է նաև դիտարկել գիտական մասնավոր կենտրոնների ստեղծումը Հայաստանում: Այդ առումով նպատակահարմար է ստեղծել մի ենթակառույց, որը կզբաղվի նման կառույցների անհրաժեշտության գնահատման, արդյունավետության, կազմակերպման ու կառավարման հարցերով:

Այսպիսով, ընդհանրացնելով հոդվածներում քննարկվող հարցերը, կարելի է ձևակերպել գիտության, նորարարության ու տեխնոլոգիաների համալիր զարգացման հիմնական թիրախային խնդիրները Հայաստանում.

- գիտության մեջ ռադիկալ արմատական փոփոխությունների անհրաժեշտության խնդիրը,
- մտավոր անվտանգության խնդիրների կարգավորում սփյուռքահայության բարձրակարգ մասնագետների օգնությամբ որոշակի սոցիալական ու գիտական դաշտ ստեղծելով՝ ներգրավման իրատեսական մեխանիզմների քննարկում,

• գիտության առաջնային ոլորտների տեխնոլոգիական զարգացման մոտեցումները (ապարների օգտագործման) մշակման այլընտրանքային տեխնոլոգիաներ, էներգաարդյունավետության տեխնոլոգիաներ, գյուղատնտեսության տեխնոլոգիաներ, օրգանական աղբի մշակման տեխնոլոգիաներ և այլն,

• գիտության ու նորարարության խթանման քաղաքականության կոնկրետ առաջարկներ, ֆինլանդիայի հետ գիտության ու տեխնոլոգիաների կապերի ակտիվացում

• գիտության ու նորարարության խթանման կառավարման կոնկրետ բովանդակային ու կառուցվածքային առաջարկներ (քիզմեսի ու գիտական նորարարության համագործակցության համատեղ ֆինանսավորում, գիտության ու կրթության, էկոնոմիկայի ու Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների համատեղ գիտահետազոտական խորհրդի ստեղծում, Գիտական ապարանքի ու նորարարության առաջնային խթանման կենտրոնի ստեղծում և այլն),

• գիտության տարբերակման ու ինտեգրացիայի նոր մոտեցումների մշակում, կառուցվածքային ու բովանդակային փոփոխությունների առաջարկներ հիմնարար ու կիրառական գիտության ոլորտում (կիրառական գիտությամբ զբաղվող գիտական կենտրոնների ստեղծում մարզերում, գիտության արդիականացում, նոր ենթաբաժինների ստեղծում, մասնավոր գիտական կենտրոնների ստեղծում),

• գիտության կառուցվածքային ու բովանդակային փոփոխությունների առաջարկների նախարարություններ, կառավարական գործակալությունների, տեսչությունների հետ քննարկման ֆորմատի ու հարթակի ստեղծում, քննարկման մեխանիզմների մշակում:

*Սարինե ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Էկոլոգ-փորձագետ, կ.գ.թ. ԳԱՍ ԵԳԻ ավագ գիտաշխատող*



➤6 մաշխարհային բանկի ծրագրով, այսինքն՝ հնարավորինս դանդաղ: Կամ փաստեր, երբ ՀՀ գլխավոր դատախազը դիմել է վարչապետին՝ պետականորեն լճից ջուր գողանալու առումով:

Նաև հետևյալ շմեցուցիչ փաստը. 2010 թ. դեկտեմբերի 31-ին լճի մակարդակը ներկայացված է 1899,70 մ, իսկ 2011 թ. հունվարի 1-ին՝ 1899,90 մ: Այսինքն, մեկ օրվա ընթացքում լճի մակարդակը թղթի վրա, բարձրացրել են 20 սմ-ով, որը համարժեք է ավելի քան 250 մլն մ³ ջրի ծավալին:

Իհարկե, պակաս շմեցուցիչ չէ Սևանա լճի սեփականաշնորհման փորձը: Այդ հարցը 2009-2010-ին քննարկվել է Սևանա լճի նախագահական հանձնաժողովում, որտեղ ելույթ ունեցողները «հիմնավորում» էին, որ ցանկացած ապրանք պետք է տեր ունենա: Կարծես պետությունը լուծարված էր: Առաջարկվում էր Սևանա լիճը բաժանել չորս հատվածների, և այդ հատվածները պետք է կառավարվեն համահունչ, հակառակ պարագայում լիճը կունենա ոչ թե չորս, այլ միայն մեկ սեփականատեր: Լճի հետ մեկտեղ պետք է սեփականաշնորհվեին նաև լիճ թափվող գետերը:

Այս փաստերը ցույց են տալիս, որ ՀՀ կառավարությունը, գիտակցելով Սևանա լճի նկատմամբ հայ ժողովրդի զգայուն վերաբերմունքը, մշտապես խաբել է նրան, որպեսզի հավատարմորեն կատարի Համաշխարհային բանկի պարտադրանքը:

Վերջին 20-25 տարիներին Սևանա լճի պահպանման խնդիրն այդպես էլ պետականորեն հստակ հիմքերի վրա

չդրվեց: Գիշտ է, մշտապես հայտարարվել է, որ լճի պահպանության խնդիրը մեր պետության համար առաջնահերթից է, սակայն գործնականում կատարվել է հակառակը. կասեցվել է լճի մակարդակի բարձրացումը, թույլատրվել է արտոնագրային ձկնորսություն, որը հենց սկզբնական շրջանում արդեն դարձավ անկառավարելի, և գլխավորապես սա է այն հիմնական պատճառը, որ ձկան պաշարները կտրուկ նվազեցին: Սևանա լճի այսօրվա ամենախիթար վիճակում իր խիստ բացասական դերն ունեցավ նաև ափամերձ տարածքները վարձակալական իրավունքով օգտագործման հանձնելը:

Ցավով պետք է նշենք, որ Սևանա լճի ջրի հաշվեկշիռը ենթադրական է, քանի որ համապատասխան սարքերի թերի լինելու և բացակայության պատճառով լիճ մտնող և դուրս եկող, գոլորշիացող ջրի քանակի որոշումը կատարվում է հաշվարկային եղանակով՝ հիմք ընդունելով նախկին՝ տասնամյակներ առաջ եղած տվյալները:

Ակնհայտ է՝ եթե լուրջ միջոցներ չծնոնարկվեն, ապա լճի պահպանության մասին խոսելը կմնա որպես դատարկ խոսք: Պետությունը պետք է Սևանա լիճը ազատագրի ընչաքանց և հայրենիքի շահը չգիտակցող մարդկանցից:

Ասելիքը ավարտելով՝ անհրաժեշտ ենք համարում ասել մի քանի առաջարկություններ, որոնք, մեր կարծիքով, կարող են նպաստել Սևանա լճի առողջացմանը և պահպանմանը:

1. Ձերբազատվել Համաշխարհային բանկի կազմած ծրագրից և Սևանա լճի կառավարումն իրականացնել

խորհրդային Միության տարիներին ստեղծված ծրագրով: 2. Պետականացնել Արփա-Սևան ջրատար-թունելը և լճի հետ կապ ունեցող ջրամբարներն ու հիդրոէլեկտրակայանները:

3գ Վերականգնել լճի մակարդակի և գոլորշիացման չափման աշխատանքները, ինչպես նաև լիճ մտնող գետերի և լճից սկիզբ առնող գետի ջրաչափ դիտակետերը:

4. Վերականգնել Մախկինում գործող կեղտաջրերի մաքրման 10 կայանները և կառուցել նորերը:

5. Քանդել-հեռացնել «Սևան ազգային պարկի» տարածքում ապօրինաբար կառուցված ավելի քան 5 հազար մեծ ու փոքր տարաբնույթ շինությունները՝ իրենց պարիսպափառներով հանդերձ:

6. Խիստ հսկողություն սահմանել լճից դուրս եկող ջրի և դրա նպատակային օգտագործման նկատմամբ:

7. Լճի ջրի մակարդակի բարձրացմանը զուգընթաց կազմակերպել ծառերից և բուսականությունից ափամերձ տարածքների մաքրումը, իսկ ջրում մնացած ծառերը և դրանց մնացորդները արմատախիլ անել:

8. Կազմակերպել Սևանի փրկության ֆոնդ: Սևանը հայ ժողովրդին է, և յուրաքանչյուր հայ կարող է իր մեծ թե փոքր ներդրումն (մասնագիտական, ֆինանսական և այլ) ունենալ Սևանի առողջացման և պահպանման գործում:

*Հակոբ Սանասարյան
Քիմիական գիտությունների թեկնածու
Մերգեյ Գրիգորյան
Քիմիական գիտությունների դոկտոր
Ռոմիկ Հարությունյան
Քիմիական գիտությունների դոկտոր*

ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Արամ Պապոյանը

Սույն թվականի սեպտեմբերի 6-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Պապոյանը:

Արամ Պապոյանը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի ծրագրային առաջնայնությունները: Նա նշեց, որ իրականացնելու է ինստիտուտի գիտական ուղղությունների վերազնահատում՝ հաշվի առնելով գիտաչափական տվյալները, միջազգային գիտության արդի միտումները, ինչպես նաև ՀՀ տնտեսական զարգացման ու երկրի պաշտպանունակության առաջնայնությունները: Ինստիտուտի գիտական ստորաբաժանումները նոր կառուցվածք են ունենալու՝ միտված գիտական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, նոր թեմաների յուրացման ճկունությանը, ներքին համագործակցության, կադրային ու ենթակառուցվածքային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը: Քայլեր են ձեռնարկվելու ինստիտուտի գիտական և ճարտարագիտական անձնակազմի երիտասարդացման համար: «Ամհրաժեշտ են կտրուկ քայլեր՝ ուղղված բուհերի շրջանավարտների, այլ ոլորտներում աշխատանքի անցած և արտերկրում աշխատող երիտասարդների՝ ինստիտուտի աշխատանքներում ներգրավմանը», - ասաց Արամ Պապոյանը: Նա կարևորեց միջազգային համագործակցության ընդլայնումն ու խորացումը, կիրառական ու նորարարական բնույթի գիտահետազոտական աշխատանքների ու գիտատեխնիկական մշակումների խթանումը, համագործակցությունը ՀՀ այլ գիտական կազմակերպությունների և բուհերի հետ:

Արամ Պապոյանը ծնվել է 1959 թվականին Երևանում: Ավարտել է ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետը: 2010 թվականին ընտրվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ:

Արամ Պապոյանը գիտական ուղին անցել է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում՝ ինժեներ-ստաժորից մինչև ինստիտուտի տնօրեն: Այս պաշտոնում նա ընտրվեց 2006 թվականին: Նրա գիտական հետազոտությունները վերա-



բերում են լազերային ֆիզիկային, ատոմային ֆիզիկային և սպեկտրասկոպիային, քվանտային և ոչ գծային օպտիկային, օպտիկական պատկերագրմանը: Արամ Պապոյանը 190 աշխատության հեղինակ է, այդ թվում՝ 4 գլուխ գրքերում, 85 հոդված գրախոսվող ամսագրերում, 28 հոդված գիտաժողովների ժողովածուներում, 73 գիտաժողովների թեզիսներ:

Արամ Պապոյանը Հայ-ռուսական համալսարանի պրոֆեսոր է, նույն համալսարանի քվանտային և օպտիկական էլեկտրոնիկայի բազային ամբիոնի վարիչ, Ֆրանսիայի Բուրգունդիայի համալսարանի հրավիրված պրոֆեսոր, «ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր. ֆիզիկա» հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ:

Անդամակցել է Ֆրանսիայի «Ալֆրեդ Կաստելեր» հիմնադրամին, ՀՀ նախագահի մրցանակի ֆիզիկայի հանձնախմբին, Եվրոպական օպտիկական ընկերությանը, ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոյի գիտխորհրդին, ՀՀ ԳԱԱ նախագահությանը:

Արամ Պապոյանն արժանացել է ՀՀ նախագահի ֆիզիկայի մրցանակի, Օպտիկայի միջազգային հանձնաժողովի «Galileo Galilei» մրցանակի, Ամանիա Շիրակացու մեդալի, 3 անգամ ճանաչվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթի հաղթող:


Կարեն Գրիգորյանը վերընտրվեց ՀՀ ԳԱԱ Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում

Սույն թվականի սեպտեմբերի 6-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց տեխնիկական գիտությունների թեկնածու Կարեն Գրիգորյանը:

Կարեն Գրիգորյանը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի զարգացման ծրագիրը: Նա հեռանկարային համարեց անօրգանական ոչ մետաղական համակարգերի ուսումնասիրությունը և մանոկոմպոզիտային, գերմալուր, գերկարծր, սպեկտրի լայն տիրույթում թափանցիկ, ռադիացիոն կայուն նյութերի ստացման տեսական և տեխնոլոգիական հիմունքների մշակումը, Հայաստանի հանքային հումքի վերամշակման մետալուրգիական և քիմիական գործընթացների հետազոտությունը՝ ցրված և հազվագյուտ տարրերի (Re, W, Se, Te) կորզման տեխնոլոգիական հիմունքների մշակումը, օբսիդային օբսիդիտների համակարգերում ուղղորդված և մանոկառուցվածքավորված բյուրեղացման պրոցեսների ուսումնասիրությունը, թափանցիկ օպտիկական ակտիվ, ապակեկերամիկական, հազվագյուտ տարրերով լեզիրացված ապակեկերպ և բյուրեղային նյութերի մշակումը՝ կիրառելի միկրոէլեկտրոնիկայում, օպտոէլեկտրոնիկայում, քիմիական արդյունաբերությունում:

Կարեն Գրիգորյանը կարևորեց կիրառական աշխատանքները, որոնք կնպաստեն ինչպես պաշտպանական խնդիրների լուծմանը, այնպես էլ տնտեսության զարգացմանը:

Կարեն Գրիգորյանը ծնվել է 1961 թվականին: 1983 թ.-ին ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը,



մասնագիտությունը՝ ճարտարագետ-մետալուրգ:

2005 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հ-տրիդիմիտից վոլաստոմիտի ստացումը» թեմայով:

Կարեն Գրիգորյանի գիտական հետաքրքրություններն ընդգրկում են վոլաստոմիտի սինթեզ և հատկությունների ուսումնասիրում և մեծածավալ արտադրության կազմակերպում, արդյունքների ներդրում ռետինատեխնիկական իրերի արտադրությունում, ոսկերչական կադապարման փոշիների մշակում և կիսաարդյունաբերական տեղակայանքի մշակում, փոքր տրամաչափի հրթիռային շարժիչների մշակում:

Կարեն Գրիգորյանը 8 պատենտի, 30 գիտական հոդվածի, 13 զեկույցի հեղինակ է: Նա ՀՀ ԳԱԱ Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտում աշխատում է 1983 թ.-ից՝ կրտսեր գիտաշխատողից մինչև տնօրեն:

ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Տիգրան Զաքարյանը

Սույն թվականի սեպտեմբերի 6-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Տիգրան Զաքարյանը:

Տիգրան Զաքարյանը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի զարգացման ծրագիրը. «Նախատեսվում են արեգակնային էներգետիկայի և ինֆրակարմիր ճառագայթման ընդունիչների համար նյութերի ուսումնասիրում, ռադիոաստղագիտական ուսումնասիրություններ՝ արդիականացնելով առկա 7 մետրանոց ռադիոդիտակների համալիրը, ռադիոլույցիոն սպեկտրների կառուցվածքի ուսումնասիրում, ինչը թույլ կտա կատարել թիրախների մոլեկուլային, ուսումնասիրություններ ռադիոալիքների տարածման բնագավառում»: Ըստ Տիգրան Զաքարյանի՝ նախատեսվում է ոլորտի շահագրգիռ կազմակերպությունների հետ համատեղ գերազանցության կենտրոնի ստեղծում կիրառական ծրագրերի իրականացման համար, թվային կառավարմամբ ֆրեզերային հաստոցի ձեռքբերում, կլիմայական և մեխանիկական փորձարկումների լաբորատորիայի կազմակերպում: Ինստիտուտը շարունակելու է երիտասարդ կադրերի պատրաստումը:

Տիգրան Զաքարյանը ծնվել է 1964 թվականին Երևանում: Ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռադիոտեխնիկայի ֆակուլտետը: Նրա գի-



տական նախասիրություններն են՝ ֆիզիկական գիտափորձի ավտոմատացում և հեռակառավարում, ռադիոլույցիոն համակարգեր և ազդանշանների թվային մշակում: Նա ավելի քան 30 գիտական աշխատությունների հեղինակ է:

Տիգրան Զաքարյանը ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնը ստանձնել է 2017 թվականին: Մինչ տնօրենի պաշտոնում ընտրվելը նա եղել է ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի լաբորատորիայի ղեկավար, 2008-2016 թվականներին՝ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ռադիոտեխնիկայի և կապի ամբիոնի վարիչ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ մոլեկուլային մակաբուժաբանության լաբորատորիայի վարիչի թափուր տեղի համար

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում կազմակերպության տնօրենի անունով
2. Անձնագրի պատճեն
3. Բարձրագույն կրթության դիպլոմի, համապատասխան մասնագիտությամբ գիտական աստիճանի դիպլոմի և կոչման վկայագրի (առկայության դեպքում) պատճեններ
4. Հրատարակված գիտական աշխատությունների ցուցակ (հոդվածներ, գրքեր, մեմագրություններ, ուսումնական ձեռնարկներ)
5. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լուսանկարով)
6. Ինքնակենսագրություն (CV)
7. Բնութագիր աշխատավայրից
8. Տեղեկություններ (հաշվետվություն) 2018-2022 թթ. գիտակազմակերպական գործունեության վերաբերյալ
9. Տվյալ բնագավառի ստորաբաժանումը ղեկավարելու և զարգացնելու տեսլական:

Անհրաժեշտ փաստաթղթերը հայտարարության օրվանից 30 օրվա ընթացքում ներկայացնել 0014, Երևան, Պարույր Սևակի 7, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն ՊՈԱԿ հասցեով: Տեղեկությունների համար դիմել կենտրոնի գիտքարտուղար Յ. Գ. Խաչատրյանին (+374 10) 28-16-01, 091 36-92-92 հեռախոսահամարներով:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14, 077 31 63 76

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 23.09.2022 թ.:

"ГИТУТИОН" ("Наука") газета НАН РА